ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ («ՆՁԱԿ» ՊՈԱԿ)
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# Ազգային գրադարանային շաբաթ
# 12-19 ապրիլի, 2021թ.

***Կարգախոս՝ «Ավանդականի և նորարարականի խաչմերուկում»***

**Ապրիլի 12-16, ժամը 09:30 -17:30**

«Բաց դռների շաբաթ» գիտատեխնիկական գրադարանի մասնագիտացված ֆոնդերի (գրքեր, ամսագրեր, արտոնագրային և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր, արդյունաբերական կատալոգներ) գրականության ցուցահանդես հետևյալ խորագրերով՝

- Ռազմական գործ
- Էներգետիկա
- Հանքարդյունաբերություն
- Սննդի և թեթև արդյունաբերություն
- Տնտեսագիտություն
- Գործարարություն, նորարարություն
- Բիզնեսի կառավարում
- Գրադարանային գործ

**Ապրիլի 13, ժամը 15:00**

Վեբինար «Ինչպես առցանց (այո', չհաճախելով գրադարան) ձեռք բերել գիտության, տեխնոլոգիաների, նորարարության և ի վերջո՝ տնտեսության տարբեր ոլորտների մասնագիտական հոդվածներ գիտատեխնիկական գրադարանի հարուստ տվյալների շտեմարանից»:

**Ապրիլի 14, ժամը 15:30**

Հանդիպում գրադարանում ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ուսանողների, դասախոսների հետ և «Ռազմական գործ» խորագրով գրադարանի մասնագիտացված ֆոնդերի գրականության ցուցադրություն: Կներկայացվեն՝

- 1990-2003թթ. գրադարանում գործող «Ռազմական գրականության սրահի» ռազմական գործին, տեխնիկային վերաբերող գրականությունը (գրքեր, կատալոգներ, տեղեկատուներ, ամսագրեր և այլն), որն իր դերակատարումն ունեցավ Հայկական բանակի տեղեկատվական աջակցության գործում:
- Գրադարանի կողմից նախկինում հրատարակված «Հայ զինվորի գրադարան» մատենաշարի 18 թողարկումները, ինչպես նաև ռազմական գործի վերաբերյալ ռուսական ամսագրերը:

**Ապրիլի 15, ժամը 15:00**

Հանդիպում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի ուսանողների, դասախոսների հետ «Ներկայի և ապագայի էներգետիկան» խորագրով մասնագիտական գրականության ցուցահանդեսի շրջանակներում:

**Ապրիլի 16, ժամը 12:00**

Գրադարանային շրջայց «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանային մասնագիտության ուսանողների ու դասախոսների համար (ծանոթություն մասնագիտացված ֆոնդերին և բաժիններին, գրադարանի գործառույթներին, ավանդական և ժամանակակից գրադարանային-տեղեկատվական ծառայություններին, գործող գիտատեխնիկական գրականության ցուցահանդեսին):

«ՆՃԱԿ» ՊՈԱԿ
Երևան, Կոմիտասի 49/3, 5-րդ հարկ, հեռ. 011 23-67-54
http://www.innovcentre.am/hy/
https://www.facebook.com/InnovCentre
https://twitter.com/InnovCentre
linkedin.com/in/«նճակ»-պոակ-1141881ab